ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հայաստան, 0001 Երևան, Աբովյան 16 Հեռ. +374 10 56 48 53, Ֆաքս +374 10 56 48 51 e-mail:armenia.artistsunion@gmail.com

18.09.2026
№75

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հայաստանի նկարիչների միությունը, բարձր գնահատելով անվանի քանդակագործ, Հայաստանի վաստակավոր նկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ Սամվել Գարեգինի Պետրոսյանի բազմամյա ստեղծագործական գործունեությունն ու նշանակալի ավանդը հայ կերպարվեստի, մասնավորապես՝ քանդակագործության զարգացման գործում, առաջարկում է նրա 75-ամյա հոբելյանի կապակցությամբ շնորհել նրան Գյումրի քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում:

Սամվել Պետրոսյանը տասնամյակներ շարունակ իր ստեղծագործական գործունեությամբ նշանակալի ներդրում է ունեցել հայ ժամանակակից քանդակագործության զարգացման և ազգային գեղարվեստական արժեքների պահպանման ու հանրահռչակման գործում: Նրա ստեղծագործական ժառանգության կարևորագույն մասը կազմում են մոնումենտալ և հաստոցային քանդակները, որոնցից բազմաթիվ աշխատանքներ տեղադրված են Գյումրիում և Հայաստանի տարբեր բնակավայրերում՝ դառնալով քաղաքային մշակութային միջավայրի կարևոր բաղադրիչներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հայաստանի նկարիչների միությունը առաջարկում է Սամվել Գարեգինի Պետրոսյանին՝ 75-ամյա հոբելյանի կապակցությամբ Գյումրի քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու նախաձեռնությունը:

Համոզված ենք, որ այս բարձր պատիվը համարժեք գնահատական կլինի անվանի քանդակագործի բազմամյա ստեղծագործական վաստակին և Գյումրի քաղաքի մշակութային կյանքում ունեցած նրա նշանակալի ներդրմանը:

Հարգանքով՝

«Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ

Նախագահ՝ Սուրեն Սաֆարյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶ
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 22.09.2026
16874

093 42 15 01



«ԵՍ ՇԱՀՈՒՄ ԱՉՆԱՎՈՒՐՅԱՆ-ՇԱՌ ԱՉՆԱՎՈՒՐՆ ԵՄ...»

ԱՐԱՍԱՅԻՍ ՇԻՐԱԶՈՒՆԻ

Գյումրին վաղուց էր սպասում նրան, իր երախտիքի ջերմ խոսքն ասելու: Առատության, պոռթկման, նրա կատարած աշխատանք իպատասխանը տալու: Գյումրեցին իր երախտիքի խոսքն արտահայտեց բրոնզաձույլ արձանի տեղադրմամբ: Շառլ Ազնավուրի առաջին այցելությունից հետո, գյումրեցի քանդակագործ Սամվել Պետրոսյանի մեջ միտք հղացավ կերտելու մեծանուն երգչին ամբողջ հասակով մեկ,այնպես, ինչպես տեսել էր նրան երկրաշարժից հետո՝ Լենինականում:

Եվ ահա գտնվեց հովանավոր: Գյումրեցու պատվախնդությամբ իր հոժարակամ ավանդը ներդրեց «Ույուտ»կոմերցիոն ձեռնարկության նախագահ Գագիկ Պետրոսյանը: Անտառավան թաղամասում, այժմ արդեն նախկին Աստղի հրապարակում,հանրապետության ճանաչված ճարտարապետ, ծնունդով Գյումրեցի Արթուր Թարխանյանի ճարտարապետական լուծումներով նախագիծը վերջապես դարձավ իրողություն...

...2001թ.սեպտեմբերի 22-ը արժանահիշատակ օր կմնա ոչ միայն Շառլ Ազնավուրի, այլև Գյումրի ժամանած բազմաթիվ հյուրերի և հատկապես գյումրեցիների հիշողություններում, որոնցուղեկցությամբ էլ հրապարակ մտավ Շառլ Ազնավուրը:


Քաղաքապետ Վարդան Ղուկասյանը հրապարակեց Աստղի հրապարակը Շառլ Ազնավուրի անունով անվանակոչելու և նրան Գյումրու պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին որոշումները: Այնուհետև, իրենց սրտի խոսքը ասացին Կրասնոդարի հայ համայնքի ղեկավար Մարտին Հովհաննիսյանը, Շիրակի թեմի առաջնորդ ծայրագույն վարդապետ, տեր Միքայել Աջապահյանը, բարեգործ Գագիկ Պետրոսյանը:

«Ազնավուրը հավերժ Գյումրու սրտի մեջ է...»,- իր խոսքում ասաց շնորհալի քանդակագործ Սամվել Պետրոսյանը:

Շառլ Ազնավուրը հավաքվածներին դիմեց իր մայրենիով, ապա շարունակեց ֆրանսերենով, որի միաժամանակյա թարգմանությամբ հանդես եկավ հայր Ռաֆայելը: Շառլն հայերենով ասաց.«Երբեքչէի մտածել, որ արձանս կտեսնեմ հայկական հողում: Քանի որ այն ինձանից շատ մեծ է, ուստի թողնում եմ Ձեզ: Այս արձանի մոտ ես շատ փոքր եմ»:

Արձանի բացման պատիվը տրվեց հենց իրեն՝ աշխարհահռչակ երգչին: Օրվա ուրախությանը խառնվեց ճանաչված երգահան Տիրան Կարվարենցի «Քեզ համար, Հայաստան» երգը.

Քո գարունները կծաղկեն նորից,
Պայծառ օրերդ կբացվեն կրկին,
Ձմեռվանից ու այս դժոխքից հետո
Դարձյալ կհառնի ծառը քո կյանքի:
Քեզ համար, Հայաստան...



ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

(ծննդյան 120-ամյակի առթիվ)



2012 թվականին լրանում է Հայոց ամենասիրված կաթողիկոսներից մեկի՝ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ (Մկրտիչ Ա Վանեցի)(1892-1907թթ.) ծննդյան 120-ամյակը: Իր գահակալության ոչ այնքան բարենպաստ շրջանում, բազում հոգսերից, ազգային հազար ու մի խնդիրների լուծումներից, վարչակազմակերպչական գործերից, գրական ու հասարակական գործունեությունից զատ, Հայոց Հայրապետը մշահողացում ունեցավ սրեղծելու նաև թանգարան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գանձերի պահպանման ու պատշաճ ցուցադրության համար: Սա Հայաստան աշխարհի համար սրեղծվելիք առաջին թանգարանի գաղափարն էր: Շենքի կառուցումն իրականացվեց Վեհարանի կողքին, սակայն մի շարք հանգամանքների բերումով այն չծառայեց իր նպատակին: Համարյա մեկ դար անց ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ երազի իրականացման անցավ ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսը: Շուրթով վերանորոգված ու բարեկարգված այդ նույն շինությունը, որպես գեղարվեստական թանգարան, բացեց իր դռներն արվեստասեր հանրության առաջ:

Եվ, ահա ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ մահվան 100-ամյակի առնչությամբ՝ նորաբաց թանգարանի առջև Գարեգին Բ Կաթողիկոսի նախաձեռնությամբ որոշվեց զետեղել ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ բրոնզաձույլ հուշարձանը: Հուշարձանի հեղինակը գյումրեցի քանդակագործ ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆՆ է, որին հրաշալիորեն հաջողվել է իր սրեղծագործությանը բնորոշ ոճական առանձնահատկությունների շրջանակում սրեղծել ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ բնութագրական կերպարը, որն առավել ցայտունորեն մեզ է ներկայացնում Մ. Օրմանյանը.«Բարձրահասակ անձեայ, վեհ դէմքով եւ առողջ կազմով անձ մըն էր Խրիմեան. բնութեամբ զուարթ, պարագայից յարմարող, ոչ ձախորդութեամբ ճոխացող, արտաքնայարդար ձեւերե հեռու, փառքի երեւոյթներն անարգող, միշտ ժպտուն և կատակախօս, հմտութեամբ ազգային շրջանակի մէջ յարուսփ, փոսպական աւիւնով երգիչ մը, որ մինչեւ վերջի ատենները խօսող մը ու գրող մը մնաց իմաստալից գիւտերով եւ գրաւիչ ոճով»:

Ընդանրացված քանդակային ձևերով լուծված այս հուշարձանն աչքի է ընկնում նաև իր վեհաշուք արտահայտչականությամբ և մոնումենտալ հնչեղությամբ: Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ սրեղծագործությանը բնորոշ ոճական պարզ երգեցիկ արտահայտչաձևերը բխում են մեր ազգային արվեստի ավանդույթներից, ասելիքն առանց ավելորդ պաճուճանքների, առանց ավելորդ էֆեկտների հաղորդելու՝ արվեստագետի սրեղծագործական դավանանքից: Գեղեցիկն ու ճշմարիտը, երբ այս կերպ են մարմնավորում գրնում, սրեղծագործությանն օժտում են գեղարվեստական արտահայտիչ ձևերով և մշրատև կենդանի արժանիքներով: Այս մոտեցումներով են լուծված Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ԱՆԱՀԻՏԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ» (1977թ.), որը պահպանվում է Հայաստանի ազգային պատկերասրահում, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի շենքի ճակատամասը զարդարող «ԳԻՐՆ ՀԱՅՈՑ» հարթաքանդակը, որն ընկալվում է իբրև ձոն հայոց այբուբենի անմահության գաղափարին ու մեր քրիստոնեական հավատին:

ՍԱՄՎԵԼԻ քանդակագործական մտածելակերպի միասնական, արվեստագետի ինքնությունը հաստատող արտահայտչալեզուն, որով մեզ է ներկայանում նաև ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ, կարծում ենք ոգևորության նոր առիթ կընձեռի շնորհաշատ արվեստագետին՝ այս ոլորտում լիարժեքորեն դրևորելու իրեն:

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

արվեստաբան
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔՅԱՆ.
«ԼԱԼՎԱՐԻ ՈՐՄԸ»



Վերջերս ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔՅԱՆ ֆոնդի վարչակազմի ջանքերով վերահրատարակվել է ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔՅԱՆԻ «ԼԱԼՎԱՐԻ ՈՐՄԸ» պոեմը:


Հայ մշակույթն ունի երկու ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔՅԱՆ՝ մեկը գրող, մյուսը՝ երգիչ, վերջինս ի շնորհիվ իր մեծանուն պապիկի, մեծացավ հայ մշակույթի փանիքի ներքո, դարձավ աշխարհահռչակ երգիչ՝ մարմնավորելով բազում կերպարներ աշխարհի օպերային թատրոնների տարբեր բեմահարթակներում:

Ֆոնդի ղեկավարությունը, իր հարգանքի փուրքը փալով մեր երգչի անցած ուղուն (50 փարի բեմական արվեստում եւ 5 փարեկան դարձավ նրա անունը կրող ֆոնդը), նպատակահարմար գրավ վերահրատարակել «ԼԱԼՎԱՐԻ ՈՐՄԸ» պոեմը:

Գրքի կազմը ձեւավորել է անվանի գեղանկարիչ ԷՄԻԼ ԳԱՋԱԶԸ (սա նրա ձևավորած առաջին գիրքն է):

Ավելացնենք, որ 1948 թվականից հետո «ԼԱԼՎԱՐԻ ՈՐՄԸ» պոեմը վերահրատարակվում է առաջին անգամ: Հանդիսանալով դպրոցական ծրագրերի մեջ ներառնված սրեղծագործություն, շատ անհրաժեշտ է այն դպրոցներին ու դպրոցականներին:

Գիրքը կարելի է ձեռք բերել «ՊԵՐճ» և «ԱՊՐԻԼ» գրատներից, իսկ մեծաքանակի համար հեռաձայնել՝ 818/ 653-6143 հեռախոսահամարով:



Նահայ Գյումրին, իբրև Կումայրի բնակավայր, ունի հինգհազարամյա պատմություն: Բուն քաղաքի երբեմնի Փափախաներ կոչված աղամասը, որ ձգվելով միանում է Պոլիգոներ աղամասին, ավելի քան չորս տասնամյակ կրում է 7-րդ արի հայ գիտնական, փիլիսոփա, մաթեմատիկոս, ֆիզերագետ, տոմարագետ, ճշգրիտ գիտությունների և բնագիտության հիմնադիր ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ անունը... Հենց այս երկու բնակելի թաղամասերը իրար ապող, հանրապետական նշանակության մայր երակի անգուցակետում կանգնեցվեց հանճարեղ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ արձանը: Քանդակագործը՝ ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, կերտել է բազալտակուռ գիտնականին ասակով մեկ, խոհուն հայացքով, մտքերով լեցուն: Նա ամուր կանգնած է երկրագնդի վրա:

Ութ մետրանոց այս բազալտե արձանը տեղ է գտել տրակառույց «Բիզնես կենտրոնի» տարածքում (նախկին՝ ասհարկանու տեղում), որն հիշեցնում է կիսագնդերից մեկը: Այն, ինչպես նշում է քանդակագործը, իր անհատույց վերն է հարազատ քաղաքին: Ճարտարապետն է անրապետության ժողովրդական ճարտարապետ, արտարապետության միջազգային ակադեմիայի ոսկվայի մասնաճյուղի պատվո անդամ, արտարապետության ակադեմիկոս, ՀՀ պետական ացանակի դափնեկիր **Արթուր Թարխանյանը**:

ԱՐԱՄԱՅԻՍ ՇԻՐԱԶՈՒՆԻ

Գյումրու Վոլի Շիրազի Հուշատուն-թանգարանի հիմնադիր-աշխատակից

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ 1400-ԱՄՅԱԿԸ ՆՇԵԼՈՒ Է ՅՈՒՆԵՍԿՕ-Ն

ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշանակալից տարեդարձների թվում իր ցանկում է ընդգրկել Բյուրականի աստղադիտարանի կողմից ներկայացված փիլիսոփա, մաթեմատիկոս, ֆիզերագետ, տոմարագետ, Հայաստանում ճշգրիտ գիտությունների եւ բնագիտության հիմնադիր ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ծննդյան 1400-ամյակը: Տոնակատարության միջոցառումների ցանկում կարեւորագույնը կլինի Բյուրականի աստղադիտարանում նախատեսվող պատմա-աստղագիտական գիտաժողովը, որը նվիրված կլինի ինչպես ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ աստղագիտական ժառանգությանը, այնպես էլ Հայաստանում աստղագիտական արժեք ներկայացնող նյութական հուշարձանների ուսումնասիրությանը:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ հայ միջնադարի խոշորագույն գիտնականն է: Ունենալով իր ժամանակի համար առաջադեմ աստղագիտական հայացքներ եւ թողնելով հարուստ աստղագիտական ժառանգություն՝ նա իրավամբ համարվում է աստղագիտության հիմնադիրը Հայաստանում: ՇԻՐԱԿԱՑԻՆ պնդում էր Երկրի ոլորտային վարկածը, առաջարկել է երկնքում երեւացող Ծիր Կաթնի շերտի ճիշտ բացատրություն եւ զարգացրել է Լուսնի մակերեւույթի բավականաչափ լավ պատկերացում: Նա կարողանում էր ճշտորեն մեկնաբանել Լուսնի եւ Արեգակի խավարումները: Նրա գիտական ժառանգությունը զգալի ազդեցություն է ունեցել հայ բնագիտական մտքի հետագա զարգացման, ինչպես նաեւ մի շարք բյուզանդական գիտնականների հայացքների վրա: ՇԻՐԱԿԱՑՈՒ աշխատանքները հայ հնագույն աստղագիտական եղրաբանության պարզաբանման հիմնական աղբյուր են հանդիսանում, ներառյալ համաստեղությունների եւ աստղերի անվանումները: